

տեսնել, բայց այն առջի օրուան յուսով թէ թերեւս հայրենեաց ցաւերը մեղմացնէ, թշուառ ժողովրդեան օգտակար կարենայ լինիլ, կը հնազանդէր: Բայց ի՛նչ տխուր աչօք կը տեսնէր այդ Վասպուրականի երկիրը, որ իրեն յանձնուեր էր, Աշոտի գերութենէն վերջ, ուր ինք բոլոր ձմեռ անդուլ աշխատեր էր հայ ժողովրդեան լուծը քաղցրացնել, առանց տիրող ազգին բռնութիւնքը եւ յափշտակութիւնքը սանձելու: Անպիտան, անարգ եւ հասարակ ծաւսսութենէ իշխանութեան հասած ամիրայներ կը տեսնէր, որ տեր եղած բռնացել էին Արծրունեաց, Ռշտունեաց, Քաջբերունեաց, Բզնունեաց անառիկ բերդերուն, եւ աւազակաբար կ'իջնէին հարստահարելու իւր ազգին ժողովուրդը, որ կը տքար, որ կը մռնչէր, որ կուգեր շղթայները կոտորտել եւ այդ անարգ բռնաւորաց գլուխը ջախջախել, եթէ ամիրապետին երկիւղը չլինէր:

Ուստի համբերութեան յորդորելով ժողովուրդը, ելաւ ճամփայ էրթալու Երազգաւորս, ուր հրաման դրկեր էր որդուոյն Աշոտս ժողովել հայոց եպիսկոպոսներն ու իշխանները կաթողիկոսի ընտրութեան համար: Ժամանակ չէր դանդաղելու. ամէն իշխան եւ եպիսկոպոս գլուխն ազատելու կը ջանար. ուստի միաբան ընտրեցին Չաքարիա անուն աշխարհական անձ մը, որուն առաքինութիւնը եւ անձնուրացութիւնը յայտնի էր ամէնուն. վասնզի Յայաստան ձանձրացեր էր այդ անտարբեր, թուլամորթ հայրապետներէն, որ իրենց հանգստութիւնը միայն կը ճանչէին եւ կը փնտրէին: Եւ այս Չաքարիս: ձեռնադրեցին միեւնոյն օրուան մէջ ի սարկաւազութիւն, ի քահանայութիւն, հեպիսկոպոսութիւն եւ ի կաթողիկոսութիւն, Առաքինի անձի մը ընտրութեան համբաւը տարածուեցաւ ամէն երկիր, եւ ժողովուրդը յոյս համարեց նաեւ այս ընտրութիւնը:

Բայց ի՛նչ կրնար ընել կաթողիկոս մը, ինչչափ որ բարի կամք էլ ունենար: Իւր նախորդին օրով դեռ ժամանակ կար, բայց հիմա, երբ թշնամին Յայաստանի կեդրոնը կը բնակէր հարիւր յիսուն հազար զօրքով եւ դեռ օգնութեան կը սպասէր, անօգուտ կրնար համարուիք ամէն ջանք, ուստի, երբ հայրապետը այս խօսքը բացաւ՝ Սպարապետին, նա յայտնի խոստովանեցաւ թէ ամէն բան եւ ջանք